

# ԿԱՊԻՏԱԼ

ԲԻԶՆԵՍ ՕՐԱԹԵՐԹ

Թիվ 39 (83)  
22 մարտ, 2008թ.

## Հայաստանի ձյունառատ սարերը՝ ձմեռային տուրիզմի հանգրվան

*Գոհար Սալունյան. «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոն*

Վերջին տարիներին Հայաստանի ճանաչելիության բարձրացումը՝ որպես պատմամշակութային զբոսաշրջային կենտրոն, բերեց ներգնա զբոսաշրջության կտրուկ աճի՝ 2007-ին արձանագրելով 508,500 միջազգային ժամանումներ՝ համեմատած 1998-ի 47,000 ցուցանիշի հետ: Սակայն, անգամ ռեգիոնալ առումով զբոսաշրջության ոլորտում Հայաստանը չի ներկայանում լավագույն ցուցանիշներով, իսկ 130 երկրների շարքում զբաղեցնում է 89-րդ տեղը՝ համաձայն Համաշխարհային Տնտեսական Ֆորումի կողմից հրապարակված «Զբոսաշրջության մրցունակության» զեկույցի: Իսկ հետագա զարգացման համար մեծ սպառնալիք են հանդիսանում վերջին քաղաքական իրադարձությունները երկրում:

Մինչդեռ ոլորտում անհերքելի է զարգանալու պոտենցիալը, որը կարող է կյանքի կոչվել ճիշտ դիվերսիֆիկացիայի դեպքում: Ներդրումային հեռանկարային ուղղություններից կարող է լինել ձմեռային տուրիզմի ոլորտը և Հայաստանը համաշխարհային շուկայում որպես նոր, չբացահայտված ձմեռային հանգստավայր ներկայացնելը:

Լեռնադահուկային գոտիների ոլորտում երկրի ունեցած մրցակցային հնարավորությունները և սպառնալիքները անհրաժեշտ է գնահատել թե՛ համաշխարհային, թե՛ ռեգիոնալ կտրվածքով, քանզի գրավչության բարձր մակարդակը կարող է զբոսաշրջիկներ ներգրավել աշխարհի տարբեր անկյուններից: Չափազանց բարձր է մրցակցության մակարդակը ձմեռային տուրիզմի գլոբալ շուկայում: Ոլորտի առաջատարներից են եվրոպական, ամերիկյան և կանադական հանգստավայրերը, որոնք սպառողներին մեծ գրավչությամբ են ներկայանում ոչ միայն մասնագիտացված ծառայությունների բարձր որակով (դահուկային ճանապարհներ, ձյան նախապատրաստում, արհեստական ձյան ապահովում, դահուկային դպրոցներ և անհատական մարզիչներ), այլև ժամանցային ընդարձակ հնարավորություններով, որոնք այլ կերպ ընդունված է անվանել apres-ski զբաղմունքներ: Ձմեռային տուրիզմի հաստատուն տեմպերով առաջխաղացում է ուրվագծվում նաև տարածաշրջանային կտրվածքով, մասնավորապես Թուրքիայի, Պարսկաստանի, Իսրայելի, Լիբանանի, Վրաստանի և Ուկրաինայի հանգստավայրերում: Տարածաշրջանում հանգստավայրերը մրցակցում են հատկապես գնային գործոններով՝ ապահովելով սպասարկման քիչ թե շատ միանման, սահմանափակ մակարդակ: Գնային առումով հատկապես մատչելի

հանգիստ կարելի է անցկացնել Պարսկաստանում, սակայն այստեղ համապատասխանորեն ցածր է սպասարկման մակարդակը և սահմանափակ է apres-ski զբաղմունքների շրջանակը: Բարենպաստ է շուկայում Թուրքիայի դիրքավորումը գների և որակի գրավիչ մակարդակով:

Ոլորտում Հայաստանի հիմնական խնդիրներից է սպասարկող ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների ոչ բավարար մակարդակը: Վերջինիս հիմնական պատճառն է երկրի ներսում մրցակցության բացակայությունը և

շուկայում միակ մասնակցի՝ Ծաղկաձորի լեռնադահուկային գոտու գործունեությունը մինչև 2007 թվականը: Ընդ որում, պետք է նշել, որ ոլորտում առավել սպառնալից է ոչ թե ներդրումների ոչ բավարար մակարդակը, այլ դրանց ոչ արդյունավետ օգտագործումը: Դրա վառ ապացույց կարող է հանդիսանալ Ծաղկաձորի հանգստավայրի ոչ համակարգված զարգացումը և ընդլայնումը, որը, ավելացնելով հյուրանոցների թիվը, չի կարողանում ապահովել մրցակցային առավելություն հանդիսացող գներ և սպասարկող ենթակառուցվածքի բավարար մակարդակ՝ մրցակցության միջազգային դաշտում պայքարելու համար: Հատկապես ակնառու է զբոսաշրջության պասիվ սեզոնին հարմարեցված ենթակառուցվածքի բացակայությունը, որը առաջ է բերում խստորեն արտահայտված սեզոնայնություն ոլորտում: Այսպես, եթե ձմեռային և ամառային հանգստի ամենաթեժ շրջանում Ծաղկաձորի հյուրանոցներում գրանցվում է մինչև 100% ծանրաբեռնվածություն և անգամ չբավարարված պահանջարկ, ապա մնացած ամիսներին այդ ցուցանիշը չի անցնում 10-15%-ը:

Մի շարք խնդիրների հետ մեկտեղ ոլորտում նշմարվում են շուկայի բազմաթիվ հնարավորություններ, որոնք ճիշտ օգտագործվելու դեպքում կարող են վերաճել մրցակցային առավելությունների: Գլոբալ տաքացման այս ժամանակաշրջանում ոլորտին հատկանշական է ուժերի բաշխվածության վերադասավորումը և միտումը դեպի ավելի մեծ բարձունքների գրավումը լեռնադահուկային գոտիների համար: Եղանակի կանխատեսումները թույլ են տալիս եզրակացնել, որ Հայաստանի բնակլիմայական պայմանները (ձմեռվա տևողությունը, տեղումների քանակը, տարվա մեջ արևային օրերի քանակը, քանու ուժգնությունը) և մի շարք լեռների տեխնիկական բնութագրիչները կապահովեն մրցունակության որոշակի մակարդակ դեռևս առաջիկա մի քանի տասնամյակների ընթացքում: Բարենպաստ հնարավորություն է նաև Սոչիում անցկացվելիք ձմեռային օլիմպիական խաղերը 2014-ին, որոնք կապահովեն զբոսաշրջիկների և հատկապես մարզիկների մեծ հոսք, որ կսպասարկվի նաև տարածաշրջանի երկրների կողմից: Ռուսաստանից ձմեռային զբոսաշրջիկների զգալի ներհոսք կարող է ապահովվել շնորհիվ Ռուսաստանի արտագնա զբոսաշրջության արագընթաց աճի: Պարսկաստանից ներհոսք կարող են նպատակադրվել այն զբոսաշրջիկների խմբերը, որոնք բարձր են գնահատում լրացուցիչ ժամանցային հնարավորությունների հասանելիությունը՝ խիստ սահմանափակված պարսկական հանգստավայրերում:

Apres-ski զբաղմունքներ ապահովելու արդի խնդիրը կարող է լուծվել Հայաստանում ձմեռային տուրիզմը զբոսաշրջության այլ տեսակների հետ համատեղելու միջոցով: Երկրի պատմամշակութային հարուստ ժառանգությունը, բնակլիմայական և էկոլոգիական պայմանները, ինչպես նաև հարուստ բուսական ու կենդանական աշխարհը հիանալի հնարավորություններ են զբոսաշրջիկներին գայթակղելու, ինչու ոչ նաև լեռնադահուկային գոտիներ:

Ոլորտի զարգացման համար չափազանց կարևոր է պետության և ինստիտուտների մասնակցությունը ներդրումային գործընթացին՝ պայմանավորված ոլորտում ենթակառուցվածքի հիմնական կարիքների առանձնահատկություններից (ճոպանուղի, ճանապարհներ, կենցաղային ենթակառուցվածք):

Այսպիսով, Հայաստանի ձմեռային տուրիզմի ոլորտը զարգացման մի շարք խնդիրների հետ մեկտեղ ունի բավականին խոստումնալից ապագա, ինչի մասին վկայում են թե՛ մասնավոր, թե՛ ինստիտուցիոնալ ներդրողների աճող հետաքրքրությունը վերջինիս նկատմամբ, որի վառ ապացույցն է Ծաղկածորում ճոպանուղու 5-րդ գծի կառուցումը, Ջերմուկում և Սևանում լեռնադահուկային գոտիների ստեղծումը, ինչպես նաև ձմեռային տուրիզմի զարգացման նախագծերի քննարկումը Աղվերանում և Արագած լեռան վրա: